Հայտարարվում է մրցույթ՝ «Երևանի Հովի. Շիրազի անվան հ. 169 հիմն. դպրոց» ՊՈԱԿ-ի «Հայոց լեզու ու գրականություն» (5 դասաժամ), «Մաթեմատիկա» (8 դասաժամ) առարկաների ուսուցիչների և դասվարի (18 դասաժամ) թափուր տեղերի համար:

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍ նախարարության մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

- դիմում (ձև 1), մեկ լուսանկար 3 × 4 չափի,
- բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ),
- անձը հաստատող փաստաթուղթ (ձև 5),
- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը՝ առկայության դեպքում,
- ինքնակենսագրություն,
- այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ–ում աշխատելու իրավունքը հաստատող փաստաթուղթ,
- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ,
- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր՝ առկայության դեպքում,
- որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ, կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են 2023թ. սեպտեմբերի 13-ից մինչև 2023թ. սեպտեմբերի 27 - ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 9:00-ից 15:00, բացի շաբաթ, կիրակի օրերից:

Մրցույթը տեղի կունենա 2023թ. հոկտեմբերի 2 - ին՝ ժամը 12:00-ին, Երևանի Հովի. Շիրազի անվան հ. 169 հիմն. դպրոցում:

Հասցեն՝ ք. Երևան Աէրացիա, Շիրակի 5-րդ նրբանցք:

Լրացուցիչ տեղեկությունների համար զանգահարել (010) 46-02-09,

(010) 46-07-81 հեռախոսահամարներով: